

այն սակաւ մի հոգը, որ կրնային դուցէ արմատանալ քանի մի բուսակը :

Կլիմային փոփոխութիւնն և բուսոց սյլայլութիւնն ազդեցութիւն ունին նա և մարդոյ նիւթականին ու բարոյա-կանին վրայ : Ապացուցանելու համար թէ ինչպէս կ'ըլլայ որ կլիմայն ազդեցութիւն կ'ունենայ մարդոյ բնականին ու բարոյականին վրայ, ուրիշ բան պէտք չէ ընել : Բայց եթէ 'ի բազդատութիւն առնուլ անտառախիտ լերանց և ծառերով զարդարուած աշխարհաց բնակիչքը՝ անծառ դաշտավայրաց բնակչաց հետ : Առաջինք զօրաւոր են մարմնով, զուարթք ու արիւսիրտք : Իսկ միւսերն հազիւ թէ կ'աշխատին և մէկէն կը

յողնին . ասոնց ոչ երակացը մէջ ոյժ կայ , և ոչ սրտերնուն մէջ արութիւն :

Կլիմային փոփոխութիւնը ոչ միայն կ'այլայլէ զտունկա այլ և զկենդանիս . ուստի կլիմային փոփոխութեան հետ փոխուելու է և մարդկան սնունդն : Մասին կերակրոց տեղ, որ յարմարաւորն է մարդոյ, պէտք է փոխանակէ ուրիշ տեսակ կերակուր մը :

Եւ որովհետեւ , ըսինք , անտառաց բարձումն կը փոխէ զկլիմայն և զբոլոր բնութիւն , մինչև նոյն իսկ մարդկային կազմութիւնը , հարկ է որ պաշտօնեայք տէրութեանց և ընապատումք դարձընեն իրենց ուշը այս վնասուց դէմ , չաւարով անոր առաջն առնուլ :

Ս Ա Ռ Ն Ա Տ Ո Ւ Ն Ք

Երկրաբանք ու աշխարհագէտք սառնատուն ըսելով կ'իմանան այն ահագին սառուցից զանգուածը՝ որ կը գտնուի լերանց գօտեաց խոր ու ընդարձակ ձորոց մէջ, և մանաւանդ բեւեռին մօտ երկիրները : Այս տեսակ սառնատունք բազմաթիւք են , անան որ միայն Ալպան լերանց մէջ գրեթէ վեցհարիւր չափ սառնատունք կը հաշուին , յորս կայ մէկ մը՝ որ իր ընդարձակութեանը համար յոյժ Սառուցից կը կոչուի , 1200 մեղր երկայնութեամբ : Բայց ասոնցմէ աւելի նշանաւորք են Հիմալայեայ լերանց սառնատունքն , որոց մէջ 103 մեղրէն սկսեալ մինչև 5800 մեղր երկայնութիւն ունեցողն կայ :

Հիմալայեայ , Կովկասային լերանց , Ալպեանց և Պիրենեանց մէջ գտնուած սառնատանց ընդարձակութիւնն ու մեծութիւնն համեմատական է գօտեաց ու ձորոց բարձրութեան . բայց աւելի երեւիլի են Հիւսիսային կողմերն եղած սառնատունք՝ իրենց բարձրութեամբն ու ընդարձակութեամբ : Իսկ խոնաւ կլիմայից տակ քիչ սառնատունք կը գտնուին : Այան տինաւոյ ամեն կողմերը թէպէտ բարձր չեն , բայց ընդհանրապէս շատ սառնատունք ունի , որոնք կ'իջնան մինչև ստորին Նորվեկիոյ կողմերը : Լոտային , որ 61 աս-

տիման լայնութեան տակ կ'ընկնայ , 9000 մեղր երկայնութիւն և 800 մեղր լայնութիւն ունի , և ծովուն երեսէն 580 մեղր բարձր է : Խաշանտոյ Հիւսիսային կողմանց սառնատունքն գրեթէ Սառուցեալ Ուլիսանոսի կը հաւասարին : Սրիցպերի ձորերն ամենքն ալ սառնարաններով լի են , որոնց ոչ միայն ծովեղերք կ'իջնան , այլ և ալեաց վրայ խաղաղով (1800 մեղր երկայնութեամբ ահագին մարտկոցներ կը ձևացնեն : Կըլֆ-Սթրիմի քերժուրներն կու գան կը հալեցընեն այդ սառուցէ լերանց խարխալները . և այն պատճառաւ մեծահատոր կոտորներ փրթելով անոնցմէ՝ ծով կ'իջնան , և ծովուն ընթացքն ալ առաւ մըլելով դիրենք , մեծամեծ նաւաց խորտակին պատճառ կ'ըլլան Ատլանդականին մէջ :

Պեհրիկիայ նեղուցին Հիւսիսային արեւմտեան զին , Սեման՝ Հերալոի բնոյոյզն 1850ին սառնատան մը գտաւ՝ մանաւոր մտադրութեան արժանաւոր : Այս նոր սառնատան վերջին ծայրին վրայ մէկ քանի տնգդիացի նաւատիք յանկարծակի կաւէ մեծ զանգուած մը կը տեսնան 7 մեղր թանձրութեամբ , որ ուղղակի սառուցին վրայ կը հանգչէր , և վրան կարգ մը կիզահող տարածուած էր , և շատ մ'ալ խոտէ թուփեր բուսած : Պ . Սեման այս

կուէ Հոգոյն մէջ փղի, ձիու, կովու և եղջերուի ոսկորներ գտաւ. փղի մը թիկանց ոսկրն և մեզր երկայնութիւն ունէր և 70 հազարակրամ ծանրութիւն. որ է ըսել գրեթէ մարդու մը ծանրութիւն. Ասկէ կը հետեի թէ այն հիւսիսային փղի ցիզն՝ սաստիկ զօրաւոր կենդանի մ'եղած ըլլայ, որ Մամուտ ալ կը կոչուի. բայց հիմա աւանեսին չի գտնուիր, և ո՛ր գիտէ թէ քանի հազարաւոր տարիներէ 'ի վեր կ'ապրէր հիւսիսային կիսագնդին վրայ: Ուրիմն այն սառույցն որուն վրայ էր, ըսիք, այս կաւը և կիզահողը, ժամանակակից էին այդ փղին, մանաւանդ թէ անկէջ ալ ուռաջ. և թէ այն սառնատունն նոր ժամանակի բան չէր, այլ ստոյգ հանքային սառնատուն մը: Շատ հաւանական է որ հալած ձեանց ջուրերն ժողովելով սառուցին երեսը այն կաւեղէն նիւթերը, և այն բարակ տիգղը ժայռից զարնուելով և սառուցից շփուելով, ձեւացուցած ըլլայ այն հողակոյտը, և նոյն ջրերը մերձակայ մեռած կենդանեաց ոսկորները քշելով հոն ամբողջած ըլլան: Այս կաւին վրայ խոտեր բուսած էին և երկար ժամանակ անցնելով վրան՝ կիզահողի կերպարանք առած. և անոնց վրայ ալ մեծամեծ տունկեր բուսեր էին, հոմացեղք այն սպընդային կիզահողէ բաղկացեալ երկիրնեւուն: Եւ այս կերպով հողուն ու բուսոց պահպանութեամբ ոչ երբէք հալեցաւ սառույցն, և ջուրն կրցաւ կենալ երկար դարեր այդ հաստատուն միջանկի մէջ:

Գուք և ուրիշ երևելի նաւասփոք՝ հուրաւային բեւեռաց կողմերը չըջնելով, բազում հետաքրքրական տեղեկութիւններ աւանդեցին մեզ այն անթիւ սառնացեալ դաշտաց վրայ. ուր բնութիւնն բարձրացուցած է երկու ահագին հրաբուխներ, որ շարունակ թանձրամած ծուխ, խիճ և աւազ դուրս կը ժայթքեն, պատասխով մերձակայ սառնապատ լեռները: Աւելի գէշ 'ի հարաւային լայնութեան եղբայրները մօտենալով, սառնեղէն լեռանց գոտին կը տարածուի, և կը շարունակուի մինչև Հրոյ Երկիրը, գէշ 'ի Մակիլլանի նեղուցը, ապա գէշ 'ի Բերուվիանա, 'ի Նոր Կրանաւա, հասարակածին մօտ:

Սառնատունք, զորս ակելի ճիշտ բառով Գետը սառուցից կրնանք կոչել, տիեզերաց բոլոր էակաց պէս կը հպատակին կանոնաւոր շարժմանց և օրինաց բնութեան, ինչ-

պէս կը վկայեն բոլոր արդի իմաստունք, Բայց այս շարժմանց երազութիւնը, աւելի կամ՝ նուազ է ըստ համեմատութեան ձորաց աւելի կամ՝ նուազ զոռ 'ի վայր ըլլալուն, ահապին զանգուածոյն ճնշման և սառնարոնաց խորութեան. որոց շարժման արացուցութիւն մ'ըլլայ այս ցուալի յետագայ պատմութիւնը:

1820ին Համել բնագէտը երկու անգղիացի ընկերօք և 11 առաջնորդով, ձեռք զարկաւ Սպիտակ լեռան վրայ հլլողու: Երբոր ճանապարհորդք լեռան Մեծ Զուրիք (Grands Mulets) բուռած կէտը հասեր էին, և ահա զարհուրելի փոթորիկ մը փըրթաւ: Գեղացի առաջնորդք՝ վարժք տեղւոյն բնութեանը, խոհեմութեամբ խորհուրդ կու տային ետ դառնալ. բայց Համել չուզեց հնազանդիլ, և հրաման տուաւ որ շարունակուի ճամբան: Առաջնորդք որ շատ աղէկ փորձ էին այս տեսակ ճանապարհորդութեան վտանգաց, յանձն չառին յառաջել, թէ ահաւոր զահավիժման երկիւղէն, և թէ նոր եկած ձեան արտճառաւ: Բայց երբոր Համել սկսաւ դիրենք իբրեւ վատասիրտ արշամարհել, յայնմամ չի կրցան համբերել այդ նախատանացն. և միաւ տեղմագնելովամեն ճիգն կըթափէին լեռան գլուխը ելլալու: Եւ երբ այսպէս իրարու ետեւէն կարգաւ առաջ կ'երթային, մէկ մ'ալ յանկարծ սառուցեալ ձիւնը տախտակի ձեւով կը փրթի և անհնարին երազութեամբ կը սկսի դէպ 'ի վար գլորիլ, զժբախտ բայց անխոհեմ ճամբորդներն ալ հետը տանելով: Այս ձեան զանգուածոյն երկայնութիւնն էր 1000 մեզր, և լայնութիւնն 70, որուն յատակը քիչ տառնէն բացուելով, թաղեց զամենքն ալ իր սոսկալի անդեղոց մէջ. յորոց ոմանք թէպէտ բնութեան ու ձեան թանձրութեան դէմ կուռնելով աղաւտեցան, բայց միւսերն կորսուեցան:

Այս աղետալի դիպուածէն 40 տարի վերջը, 1860ին, գտնուեցաւ դեռ այնպէս թաղուած սառուցից մէջ քանի մը մարդու ոսկորներ, թաղիքէ գլխարկ մը, և մէկ լապտեր: Այս վտանգէն աղատող ութսուն ամսեայ երկու ծերունիք՝ գլխարկին գոյնէն և ուրիշ նշաններէ ճանչցան իրենց երկու հմուտ ընկերաց կորուստը, Համելի անխոհեմ ու յանդուգն արշաւանաց ատեն: